«Այբ» ավագ դպրոց

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ **2024 թ. ապրիլ**
Տևողություն՝ **1 ժամ 15 րոպե**

«Այբ» ավագ դպրոց

ԳԾԱԿՈԴ

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Բոլոր պատասխանները գրել այս քննաթերթիկի մեջ՝ համապատասխան տեղերում:
Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:
Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Այս փաստաթուղթը բաղկացած է **7** տպագիր և **1** դատարկ էջերից:

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

Հայոց լեզու

1. Անհրաժեշտ տեղում լրացրո՛ւ բաց թողած տառերը և երկհնչյունները.

Ամեն հայ մտնում է Մատենադարան որպես սրբատեղի և խոսում ակնածանքով ու շշուկով:

Այստեղ տասնվեց հազար ձեռագիր մատյան և պատառիկ կա՝ ***տասնինը*** գրամանոցից մինչև ամենամեծը՝ երկփթանոց մագաղաթյա հսկան:

Իսկապես, որքա՜ն նման են հայ ժողովրդի և ***նրա*** ձեռքով ստեղծված մատյանների ճակատագրերը: Երբ գալիս էին թշնամիները, ձեռագիր ընդօրինակողը, շալակն առած ***մագաղաթյա*** ծանր թերթերի կապոցը, թանաքը, ներկերը և ընդօրինակվող մատյանը, գնում էր ժողովրդի հետևից՝ դաղարի պահերին շարունակելով արտագրել:

Գրիչները հիսուն-վաթսուն տարի զօրուգիշեր արտագրել են ձեռագրերը, իսկ նկարիչները ծաղկել են դրանք առասպելական, երևակայական կենդանածաղիկներով: Ծաղկած մատյանը գույների մի փոքրիկ մրրիկ է՝ մանրապատկերի շրջանակում փակված: Հարկ եղած դեպքում մատյաններն ***արագորեն*** թաքցրել են անգութ ու բիրտ թշնամուց: Մատյանը ***եղել է*** սուր, որով ժողովուրդը պայքարել է ***հանուն*** ազատության, ազգապահպանության և ***ինքնության*** հաստատման: Պատահել է՝ մատյանները թաղել են, դրանց վրա ողբացել:

Ձեռքից ձեռք փոխանցվելով՝ ձեռագրերը երկար դեգերելուց հետո հայտնաբերվում էին, հանգրվանում իրենց ապահով ու լուսե վերջին օթևանում:

5 միավոր

2. Տեքստից դո՛ւրս գրիր տրված բառերի հոմանիշները: Յուրաքանչյուրի համար գրի՛ր նաև մեկ հականիշ.

մտացածին երևակայական-իրական

ժանտ բիրտ-բարեգութ

մաքառել պայքարել-հանձնվել

հավաստում հաստատում-հերքում

2 միավոր

3. Տեքստից դո՛ւրս գրիր տրված կաղապարներին համապատասխան երկուական բառ.

արմատ+հոդակապ+արմատ ճակատագիր, մանրապատկեր

արմատ+ արմատ տասնվեց, տասնինը

արմատ+արմատ+վերջածանց երկփթանոց, ակնածանք

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

արմատ+վերջածանց պատառիկ, նկարիչ

նախածանց+արմատ անգութ, ամենամեծ

2,5 միավոր

4. Տեքստում գտի՛ր 2 բարդածանցավոր բառ, որոնցից մեկն ունի թվականով արտահայտված արմատ, իսկ մյուսը՝ ածականով: Դո՛ւրս գրիր այդ բառերը և ընդգծի՛ր արմատները:

երկփթանոց **սրբ**ատեղի

0,5 միավոր

5. Տեքստից դո՛ւրս գրիր ա խոնարհման 1 անկանոն բայ և 1 սոսկածանցավոր բայ, կազմի՛ր այդ բայերի սահմանական եղանակի անցյալ կատարյալ և հրամայական եղանակի ապառնի ժամանակաձևերը (բայերը գործածի՛ր եզակի թվով, 1-ին դեմքով, դրական և ժխտական խոնարհումով):

անկանոն բայ, սոսկածանցավոր բայ գալ // մտնել

սահմանական եղանակ, անցյալ կատարյալ ժամանակաձև եկա, չեկա // մտա, չմտա

հրամայական եղանակ ե՛կ, մի՛ եկ // մտի՛ր, մի՛ մտիր

1,5 միավոր

6. Որոշի՛ր տեքստում ընդգծված բառերի (8 բառ) խոսքիմասային պատկանելությունը և գրի՛ր դրանք ներքևում տրված համապատասխան տողում: Լրացրո՛ւ փակագծերում նշված հատկանիշները, անհրաժեշտության դեպքում նշի՛ր նախադասության մեջ շարահյուսական պաշտոնը:

գոյական (հոլովը, հոլովումը) ինքնության-սեռական-տրական հոլով, ա ներքին հոլովում, հատկացուցիչ

ածական (տեսակը, կազմությունը) մագաղաթյա-հարաբերական ածական, ածանցավոր, որոշիչ

թվական (տեսակը, կազմությունը) տասնինը-քանակական թվական, բարդ, որոշիչ

դերանուն (տեսակը, հոլովը) նրա-անձնական դերանուն, սեռական հոլով, հատկացուցիչ

բայ (եղանակը, ժամանակաձևը, դեմքը) եղել է-սահմանական եղանակ, ներկա վաղակատար ժամանակաձև, 3-րդ դեմք, ստորոգյալ

մակբայ (տեսակը, կազմությունը) արագորեն-ձևի մակբայ, ածանցավոր, ձևի պարագա

կապ (տեսակը) հանուն-նախադրություն

վերաբերական (տեսակը) իսկապես-հաստատական

2 միավոր

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

7. ա. **Շարունակի՛ր միտքն այնպես, որ նախադասությունը լինի**

1/ բարդ համադասական՝

Մատենադարանը կարծես սրբատեղի լինի հայերի համար, և ամեն հայ այնտեղ խոսում է ակնածանքով ու շշուկով:

2/ բարդ ստորադասական՝

Մատենադարանը կարծես սրբատեղի լինի հայերի համար, որովհետև այնտեղ տասնվեց հազար անփոխարինելի ձեռագիր մատյան և պատառիկ կա:

բ. **Կազմի՛ր բարդ ստորադասական նախադասություն՝ անհրաժեշտ փոփոխությունների ենթարկելով տրված բառերը, ճիշտ դասավորելով և շաղկապներ ավելացնելով:**

Վերջացնել, քննություն, ձեռագրեր, հիշատակարան, ինքը, կցել, մի, տքնել, այգաբաց, ճրագալույց:

Երբ վերջացրեց ձեռագրերի քննությունը, կցեց մի հիշատակարան, թե ինքը տքնել է այգաբացից մինչև ճրագալույց:

1,5 միավոր

8. Կետադրի՛ր տեքստը:

Արքայից արքային շքախմբի մատռվակները գինի և ուտելիք էին մատուցում: Հնչեցին թմբուկներն ու գալարափողերը ցնծացին ծնծղաները: Ամրոցի դարպասները բացվեցին և գուսանների թափորը քայլեց դեպի տափարակ: Ցնծագին ծափողջյուններով դիմավորեց նրանց ժողովուրդը: Գուսանները տեղավորվեցին պատվանդանների վրա և քիչ հետո քաղցրահնչյուն թրթռացին նրանց բամբիռները: Ասքն սկսվեց: Աջ պատվանդանին նստած արծվահայաց կորնթարդ քթով մի գուսան ելավ տեղից թեքվեց արքայից արքայի կողմը և շնորհալի խոնարհումով գլուխ տալով ասաց

Ողջույն ձեզ թագուհի և թագավոր: Ձեզ աստվածային երջանկություն են մաղթում Գողթնի գուսանները: Մեր ողջույնները քաղցր են ինչպես հայոց խաղողի ողկույզների հատիկները անբիծ ու վճիտ ինչպես մեր սրտից բխած անբասիր երգը:

Արքայից արքային շքախմբի մատռվակները գինի և ուտելիք էին մատուցում: Հնչեցին թմբուկներն ու գալարափողերը, ցնծացին ծնծղաները: Ամրոցի դարպասները բացվեցին, և գուսանների թափորը քայլեց դեպի տափարակ: Ցնծագին ծափողջյուններով դիմավորեց նրանց ժողովուրդը: Գուսանները տեղավորվեցին պատվանդանների վրա, և քիչ հետո քաղցրահնչյուն թրթռացին նրանց բամբիռները:

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

Ասքն սկսվեց: Աջ պատվանդանին նստած արծվահայաց, կորնթարդ քթով մի գուսան ելավ տեղից, թեքվեց արքայից արքայի կողմը և շնորհալի խոնարհումով գլուխ տալով՝ ասաց.

–Ողջո՛ւյն ձեզ, թագուհի՛ և թագավո՛ր: Ձեզ աստվածային երջանկություն են մաղթում Գողթնի գուսանները: Մեր ողջույնները քաղցր են, ինչպես հայոց խաղողի ողկույզների հատիկները, անբիծ ու վճիտ են, ինչպես մեր սրտից բխած անբասիր երգը:

3 միավոր

9. Գտի՛ր և ուղղի՛ր սխալները այն նախադասություններում, որտեղ դրանք առկա են (բառագործածության, խնդրառության, համաձայնության):

ա. Ներկայումս համացանցի մասին շատ թույր կարծիք է ձևավորվել, որովհետև դրա միջոցով բազում խաբեություններ են կատարվում:

Ներկայումս համացանցի մասին շատ **թյուր** կարծիք է ձևավորվել, որովհետև դրա միջոցով բազում խաբեություններ են կատարվում:

բ. – Եթե ձեր նման աշակերտները շատ լինեն, մեր հասարակությունը միայն կշահի, – նշեց տնօրենը:

– Եթե **ձեզ** նման աշակերտները շատ լինեն, մեր հասարակությունը միայն կշահի, – նշեց տնօրենը:

գ. Այս կամ այն խնդիրները տարբեր լուծումներ և մոտեցումներ են պահանջում:

Այս կամ այն **խնդիրը** տարբեր լուծումներ և մոտեցումներ **է** պահանջում:

դ. Այգեբացին լսեցի թռչունների դայլայլը և առվակի կարկաչյունը:

Այգաբացին լսեցի թռչունների դայլայլը և առվակի կարկաչյունը:

ե. Բազմիցս խնդրել եմ, որ աշխատողները զգոն և ուշադիր լինեն, սակայն ոչինչ չի փոխվել:

Ճիշտ է:

2 միավոր

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

Լեզվամտածողություն

1. **Ի՞նչ կարծիք ունես Մատենադարանի մասին: Ի՞նչ դեր է այն ունեցել հայ ժողովրդի և մշակույթի պատմության մեջ: Կարծիքդ արտահայտի՛ր 3 բարդ նախադասությամբ (համադասական և ստորադասական):**

3 միավոր

2. Ինչպե՞ս էին ստեղծվում ձեռագրերը: Կցանկանայի՞ր գրիչ կամ ծաղկող լինել: Մտքերդ շարադրի՛ր 1 պարզ ընդարձակ և 3 բարդ նախադասությամբ:

2 միավոր

3. *Հրատարակել* և *հրապարակել* բառերով կազմի՛ր մեկական նախադասություն:

2 միավոր

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

4. *Ծով* և *կծու* բառերը գործածի՛ր նախադասություններում ուղիղ և փոխաբերական իմաստներով:

ուղիղ _____

փոխաբերական _____

ուղիղ _____

փոխաբերական _____

2 միավոր

5. *Արև* և *փայտ* բառերից յուրաքանչյուրով գրի՛ր 2-ական դարձվածք և դրանցից 2-ով կազմի՛ր նախադասություններ:

արևդ ապրի-օրհնանք՝ կյանքդ երկար լինի

արևը առնել-սպանել, կյանքից զրկել

փայտը վրան կոտրել-ուժեղ ծեծել

փայտ կուլ տալ-ձիգ, անշարժ կանգնել

2 միավոր

6. Բառաշարքում ընդգծի՛ր համանունները և դրանցից մեկը 2 տարբեր իմաստներով գործածի՛ր նախադասություններում:

Սեղան, **սիրելիս,** երկաթ, տառ, **անջինջ,** նկար:

1 միավոր

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

ԴԱՏԱՐԿ ԷՋ

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն